

Ուղղեք ձեր հարցերը Ամալյա Կոստանյանին

9 06 2009



Հարգելի ընթերցողներ, հետընտրական զարգացումների մասին օն-լայն հարցազրույցների մեր հաջորդ հյուրը “Թրանսփարենսի ինթերնեշնլ” հակակոռուպցիոն կենտրոնի նախագահ Ամալյա Կոստանյանն է, ով պատրաստակամություն է հայտնել խոսելու ձեզ հետ եւ պատասխանելու ձեր հարցերին: Տեղեկացնենք, որ “Թրանսփարենսի ինթերնեշնլ” հակակոռուպցիոն կենտրոնը դիտարկումներ է անցկացրել և՛ ընտրությունների օրը, և՛ նախընտրական շրջանում, ինչպես նաեւ հանդես է եկել համապատասխան զեկուցմամբ: Ուղղեք ձեր հարցերը մեր հյուրին մինչեւ վաղը՝ հունիսի 10 ժամը 14:00-ն, իսկ արդեն 14:30 լսեք հարցազրույցը ուղիղ եթերում՝ սեղմելով <http://audio.a1plus.am/broadcast.php?play=49>

Ամալյա Կոստանյան. “Ի վերջո, կին օլիգարխներ չունենք”...

Հարցազրույցը վարում են լրագրողներ Դիանա Մարկոսյանը եւ Շուշան Հարությունյանը

10 06 2009



Դիանա Մ.-Դուք բավականին սուր գնահատականներ տվեցիք Երեւանի ավագանու ընտրություններին: Արդյոք դրանք անցկացված ընտրություններից ամենավատն էին եւ ինչով էր որակապես ըարբերվում 2008-ի նախագահական ընտրություններից:

Քանի որ մենք դիտորդական առաելություն սկսել ենք իրականացնել միայն անցած տարվանից, եւ չեմ կարող եզրակացություններ անել անցյալ ընտրություններից որպէս դիտորդ, բայց 2003 թվականից մենք դիտարկել ենք քարոզարշավի ֆինանսավորումը: Այն, ինչի մենք ականատես եղանք, ինձ ստիպում է ասել, որ նման խայտառակություն մենք չենք տեսել դեռ: Չեմ բառացում, որ նման խայտառակություններ եղել են այս բոլոր տարիների ընթացքում, պարզապէս մենք ականատես չենք եղել: Տեխնոլոգիաները զարգացել են, կեղծման մեթոդները փոխվել են, բայց երեւի 8-րդ ընտրատարածքի յուրահատկությունը այն էր, որ բացահայտորեն էին խախտում: Այսինքն, տեխնոլոգիաներ, իհարկե, կիրառում էին, բայց այնքան ցինիկ էին, որ չէին էլ ուզում դիտորդներից որեւէ բան թակցնել: Բացահայտ քննարկում էին՝ ինչ տոկոսների շուրջ են պայմանավորվել կուսակցությունները, բացահայտ լցոնում էր, բացահայտ կուտակումներ, բացահայտ սպառնալիքներ, ահաբեկում եւ նույնիսկ դիտորդների կաշառք էին առաջարկում: Նորություն էր նաեւ այն, որ բավականին մեծ թվով դիտորդներ էին գրանցվել եւ մեկ դեպք արձանագրվեց, երբ դիտորդն էլ լցոնում կատարում: Մենք զարմանում ենք նաեւ, որ քրեական գործերը հարուցվեցին ոչ այն ընտրատեղամասերում, որտեղ խայտառակ էին ընտրությունները:

Բլանշ- Դուք հայտարարեցիք, որ առնվազն 8 տեղամասում անվավեր պիտի ճանաչվեն ընտրություններ: Ինչ էք կարծում, դրանք էականորեն կփոխեն ընտրությունների արդյունքները:

Գիտեք ինձ համար կարեւոր չէ այսօր թվերի մասին խոսել, որովհետեւ այն մթնոլորտը, որում այդ ընտրությունները ընթացան եւ այն ահաբեկման, ճնշման, ընտրակաշառքի, անբարոյանակության, ցինիզմի, եւ կարող եմ շարունակել այս ցանկը... Եթե մի երկրում մեկ ընտրատարածքում նման մթնոլորտում անցկացվում են ընտրություններ եւ անցկացվում, դա բավական է ասելու, որ ոչ միայն ընտրությունները չեն կայացել, այլեւ ընտրությունները արժեզրկվել են:

Բլանշ-Հայզ (Armenia)-ի հարցը մեջբերեմ: Կարող էք ասել, որ 2009 թվականի ավագանու ընտրությունները կեղծված են: Այո, թե ոչ:

Ես կարող եմ ասել, որ 8-րդ ընտրատարածքում ընտրությունները չեն արտացոլել ընտրողների ազատ կամքը: Եթե ամենաթողությունը խրախուսվում է, եթե կա նման վերաբերմունք, եւ չեմ կարող այս ընտրությունները լեգիտիմ համարել:

Դիանա-Կա տեսակետ, որ Մալաթիա-Սեբաստիայում ընտրությունների այդպիսի ընթացքը կազմակերպված էր դիտորդների, լրագրողների ուշադրությունը շեղելու համար, իսկ հիմնական կեղծիքները մյուս տարածքներում եղան: Ինչպէս էք այս վարկածը գնահատում:

Չեմ կարող միանշանակ համաձայնվել: Հնարավոր է, այս երկրում ընտրությունների ընթացքում ամեն ինչ հնարավոր է: Ի դեպ, ասեմ, ինչն է հուշում մեզ, որ դա բնորոշ չէ միայն մի ընտրատարածքի, դա քարոզարշավի ընթացքն է: Եթե հիշում եք՝ ընտրարշավին համեմատական կարգով քիչ գումարներ է ծախսվել եւ մեզ հաճախ հարցնում էին որպես փորձագետների ինչպես եք գնահատում այս փաստը: Եվ մենք նկատել էին, որ հիմնական ակցենտը դրվում էր, որ քաղաքապետը դա հիմնականում աղբ հավաքողի դերակատար է: Հիմա արդեն պարզ է, որ ամեն ինչ արվում էր քարոզչություն չիրականացնելու եւ պասիվ զանգվածին չակտիվացնելու համար: Հիմա արդեն տեսանք, որ կրիմինալ մեթոդներով իրականացվեցին ընտրակեղծիքներ:

Բլանշ-Ընտրություններից անցնելով քաղաքական ուժերին: Մեր ընթերցողները հարցնում են՝ քաղաքական ուժերից ու՞մ եք ամենաշատը համակրում եւ ու՞մ գործունեությունն է ամենից անընդունելին ձեզ համար:

Որպես “Թրանսփարենսի ինթերնեյշնլ” կազմակերպության նախագահ, ես մանդատով իրավունք չունեմ ոչ համակրել, ոչ չհամակրել որեւէ կուսակցության: Մենք կարող ենք համագործակցել բոլոր կուսակցությունների հետ, ինչպես եւ փորձում էին անել այս քարոզարշավի մոնիտորինգի ժամանակ, չնայած ոչ բոլոր է համաձայնում համագործակցել, չնայած մենք փորձում ենք: Որպես անձ ես ցավոք սրտի պետք է խոստովանեմ, որ ես չունեմ մի կուսակցություն, որին համակրում եմ, չնայած համեմատական կարգով իհարկե կան կուսակցություններ, որոնք ինչ-որ առումով կարող են ավելի պակաս քննադատության առժանանալ: Ցավոք սրտի քաղաքական դաշտը այնպիսին է, քաղաքական ինստիտուտները այնպիսին են եւ ամեն ինչ այն աստիճան է վերահսկվում, որ հնարավոր չէ իսկապես էվոլուցիոն կերպով ծնվեն նոր առաջնորդներ, ուժեղ ընդդիմություն լինի: Ճնշումները սարսափելի են: Եւ ճնշումները ոչ միայն օրենսդրական մակարդակի են, ոչ միայն ուժային կառույցներն են օգտագործում, այլ մթոնոլորտը ինքը:

Բլանշ- Այնուամենայնիվ, նույն հարցի մեջ երկու անուն է նշված՝ Դաշնակցություն կուսակցություն եւ Բարգավաճ Հայաստան: Հարցնում են՝ ինչպես եք վերաբերվում այս կուսակցություններին:

Այն բոլոր կուսակցություններին, որոնք լինելով կոալիցիայի անդամ, Դաշնակցությունը արդեն դուրս է եկել, լինելով իշխանության դեկին չեն կանխարգելել այն իրավիճակը, որ այսօր տիրում է Հայաստանում, կարծում եմ ես չեմ կարող գովեստով արտահայտվել եւ ոչ մի կուսակցության մասին: Եվ կուսակցությունները, եւ մենք քաղաքացիներիս, մեղքի բաժինն ունենք: Այն, ինչ տիրում է Հայաստանում, չի նպաստում կուսակցությունների նորմալ զարգացմանը:

Դիանա Մ.—Դուք ավելի քան մյուսները, շոշափում եք հասարակության տրամադրությունները: Երեկ Խոսքով Հարությունյանը հայտարարեց, որ Հանրապետական ամենաազդեցիկ քաղաքական ուժն է: Իսկ դուք ինչ եք կարծում:

Հանրապետականը այսօր ամենաազդեցիկ լծակներն ունի եւ օրինական կերպով ազդելու հասարակական կարծիքի վրա, այսինքն չխախտելով օրենքը եւ խախտելով

օրենքը, օրինակ՝ օգտագործելով վարչական ռեսուրսը, ինչը շատ ակտիվորեն չարաշահում է: Եվ տարբեր այլ լծակներ կիրառելով, որը անընդունելի է ինձ համար եւ այս մթնոլորտում, երբ չկա հավասար պայմաններ կուսակցությունների համար եւ այս պայմաններում հնարավոր չէ ասել, որ եթե դու 40 տոկոս ձայն ես հավաքել դու 40 տոկոս ժողովրդի վստահություն ես վայելում:

Բլանշ-Այ խոսեցինք ընտրություններից, liberal-ը խնդրում է ձեզ մեկնաբանել ընտրություններից առաջ նորաթուխ դիտորդական կազմակերպությունների ի հայտ գալու փաստը, որոնք իրենց անվանմամբ շատ են հիշեցնում հայտնի եւ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների անունները:

Երեւի խոսքը Ազատ հասարակության ինստիտուտին է վերաբերվում, որը նմանեցնում էին “Բաց հասարակության ինստիտուտին”, որովհետեւ այլ անվանում ես չեմ տեսել: Դա էլ է տեխնոլոգիա եւ մի քանի տարի առաջ է առաջին անգամ կիրառվել: Ընդհանրապես երեւի 29 կազմակերպություն կար, բայց մենք մեկ-երկուսի գնահատականն ենք լսել առ այսօր: Ճիշտն ասած հետաքրքիր է մնացածները ընդհանրապես ինչ են արել

Բլանշ-Անցնելով քաղաքականությունից դեպի անհատապես ձեզ: Գրում են, որ բարձր են գանահատում ձեր գործունեությունը, սակայն, գրում են, որ ոչ մի բան չգիտեն ձեր մասին եւ խնդրում են պատմել: Թե ով եք մասնագիտությամբ, երբ սկսեցիք աշխատել այս կառույցում, ով է ձեր ամուսինը եւ ինչպես է վերաբերվում ձեր աշխատանքին:

Սկսեմ վերջից: Ամուսին չունեմ, բնականաբար զոհ չունեմ ընտանիքում, որը տառապում է իմ աշխատանքից, քանի, որ իրոք ոչ նորմավորված աշխատանք է եւ սա այն աշխատանքն է, որը բավականին շատ բացասական էներգիա է պարունակում: Ցավոք: Ես ավարտել եմ 3 բուհ, երեւի բոլորը չթվարկեմ, միայն ասեմ, որ մինչեւ 90-ականների սկիզբ գիտկանան եմ եղել, թեկնածու եմ գիտությունների, կենսաֆիզիկոս եմ: Բայց ԽՍՀՄ փլուզումից հետո գիտությունը այնպիսի վիճակում էր, որ ես չէի կարող շարունակել եւ պատահական ես փոխեցի իմ մասնագիտությունն ու ոլորտը: Հայաստանում սովորել եմ Ամերիկյան համալսարանում, Ամերիկայում սովորել եմ Դյուկ համալսարանում: